



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church

of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Մբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office e.info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

Visiting Priest Rev Fr Movses Sargesian

1: List of the Sunday Reading,

10th January 2016

Bulletin No 2/16

Սուրբ Ծննդեան հինգերորդ օր (հունվարի 10, 2016թ.)

Fifth Day of Christmas

Ղուկաս 1:39-56

Այդ օրերին Մարիամը վեր կացավ և փութով գնաց Հուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը, մտավ Ջաքարիայի տունն ու Եղիսաբեթին ողջույն տվեց: Եվ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, և Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով, քարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնյա՛ լ էս դու կանանց մեջ, և օրհնյա՛ լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ գա. որովհետև ահավասիկ, երբ քո ողջույնի ձայնը հասավ իմ ականջին, մանուկը ցնձալով խաղաց իմ որովայնում: Եվ երանի՛ նրան, ով կհավատա, որ Տիրոջ կողմից իրեն ասվածները կկատարվեն»:

Մարիամի օրհներգությունը

Իսկ Մարիամն ասաց. «Իմ անձը պիտի փառավորի Տիրոջը, և իմ հոգին ցնձաց իմ Փրկիչ Աստծով, որովհետև նա նկատեց իր աղախնի խոնարհ վիճակը: Եվ ահա այսուհետև բոլոր սերունդներն ինձ երանի պիտի տան, որովհետև ամենագոր Աստված մեծամեծ գործեր արեց ինձ համար, և նրա անունը սուրբ է: Նրա ողորմությունը սերնդեսերունդ իր երկյուղածների վրա է: Նա իր բազկով զորություն զործադրեց, ցրեց իրենց սրտի խորհուրդներով ամբարտավաններին. հզորներին տապալեց իրենց աթոռներից և քարձրացրեց խոնարհներին: Քաղցածներին լիացրեց բարիքներով և մեծահարուստներին ձեռնունայն արձակեց: Նա պաշտպան կանգնեց իր ծառային՝ Իսրայելին՝ հիշելով իր ողորմությունները, ինչպես ասել էր մեր հայրերին՝ Աբրահամին և նրա սերնդին, հավիտյան»: Ապա Մարիամը գրեթե երեք ամիս մնաց Եղիսաբեթի մոտ և վերադարձա իր տունը:

Luke 1:39-56

Mary visits Elizabeth

At that time Mary got ready and hurried to a town in the hill country of Judea, where she entered Zechariah's home and greeted Elizabeth. When Elizabeth heard Mary's greeting, the baby leaped in her womb, and Elizabeth was filled with the Holy Spirit. In a loud voice she exclaimed: "Blessed are you among women, and blessed is the child you will bear! But why am I so favored, that the mother of my Lord should come to me? As soon as the sound of your greeting reached my ears, the baby in my womb leaped for joy. Blessed is she who has believed that the Lord would fulfill his promises to her!"

Mary's Song

And Mary said: "My soul glorifies the Lord and my spirit rejoices in God my Savior, for he has been mindful of the humble state of his servant. From now on all generations will call me blessed, for the Mighty One has done great things for me— holy is his name. His mercy extends to those who fear him, from generation to generation. He has performed mighty deeds with his arm; he has scattered those who are proud in their inmost thoughts. He has brought down rulers from their thrones but has lifted up the humble. He has filled the hungry with good things but has sent the rich away empty. He has helped his servant Israel, remembering to be merciful to Abraham and his descendants forever, just as he promised our ancestors." Mary stayed with Elizabeth for about three months and then returned home.

2: A short interpretation of the Gospel reading

Ղուկաս 1:39-56 համարների համառոտ բացատրությունը

Գաբրիել հրեշտակապետի հաղորդած այն լուրը, թե Եղիսաբեթը ևս հղի է, ստիպեց Մարիամին անձամբ այցելել և շնորհավորել նրան: Նազարեթից եկավ Քեբրոն և ողջունեց իր մորաքեռորդուն: Եղիսաբեթը երկնային զորությամբ իմացել էր Մարիամին տրված մեծ շնորհի մասին, ուստի օրհնեց թե՛ նրան և թե՛ նրա որովայնում եղող պտուղը: Մի հրաշալի երևույթ էլ պատահեց: Մայրերի փոխադարձ ուրախությանը մասնակից եղան նաև իրենց զավակները, որ դեռ լույս չէին տեսել: Վերջինս էլ Եկեղեցին բացատրում է հետևյալ կերպ՝ Հովհաննես Կարապետը որովայնից որովայն երկրպագող է: Այդ առիթով Մարիամն արտասանեց իր «Մեծացուցե՛ք» օրհներգությունը, որ երախտապարտ ու խոնարհամիտ իղձերով բարձրացնում է Աստվածային ողորմությունը և հայտարարում նրա սքանչելի կարողությունը:

Մարիամը մոտ երեք ամիս հյուրընկալվեց Քեբրոնում, Զաքարիայի տանը և այնտեղից վերադարձավ Նազարեթ՝ հայրական տուն:

3: Feasts celebrated in the Armenian church

Քրիստոսի Անվանակոչության տոն (հունվարի 13)

Ըստ հրեական օրենքի՝ ծննդյան 8-րդ օրը Հիսուս, ինչպես նորածին ամեն մի արու զավակ, թլփատվեց և անվանակոչվեց: Այդ մասին վկայում է Ղուկաս Ավետարանիչը. «Եվ երբ ութ օրերը լրացան, և նա թլփատվեց, նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր, երբ դեռ չէր հղացվել մոր որովայնում» (Ղուկ. 2:21): Հիսուս երբայերեն բառ է, որ նշանակում է Փրկիչ:

Գաբրիել հրեշտակը, Աստվածամորն ավետելով Աստծո Որդու ծննդյան մասին, Հիսուս անունն է հիշատակել: Այս մասին կրկին վկայում է նույն Ավետարանիչը. «Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի որդի և նրա անունը Հիսուս կդնես» (Ղուկ. 1:31): Հիսուս անվանը զուգահեռ Փրկչին տրվում է նաև Քրիստոս անունը: Այն հունարեն բառ է, որ նշանակում է Օծյալ և համապատասխանում է երբայերենի Մեսիային: Փրկչի անվանակոչության տոնին հայոց բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ, իսկ նախորդ օրը երեկոյան ժամերգության ավարտին կատարվում է նախատոնակի արարողություն:

Feast of Naming of Our Lord Jesus Christ (January 13)

Each year, on January 13, the Armenian Apostolic Church celebrates the Feast of Naming of Our Lord Jesus Christ. As Evangelist St. Luke writes in his Gospel, according to the Jewish tradition “On the eighth day, when it was time to circumcise him, he was named Jesus, the name the angel had given him before he had been conceived.” (Lk 2:21). “Jesus” is a Hebrew word meaning “Savior”. According to the Gospel according to Luke when the angel Gabriel came to Mary to give her the good tidings of the birth of the Son of the Most High, he said that Mary would name the baby “Jesus”. “You will be with child and give birth to a son, and you are to give him the name Jesus.” (Lk 1:31).

Parallel to the name “Jesus” the name “Christ” is given to the Savior, which is a Greek word meaning “Consecrated” and corresponding to the Hebrew word “Messiah”.

On the Feast of Naming of Our Lord Jesus Christ a Divine Liturgy is celebrated in all Armenian Churches. On the eve of the feast, following the evening service a special service is conducted.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

- By Mrs Hranoush Manukian for the soul of her parents Vartouhi and Tatios and for her sister Rita Manoukian.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

St Yeghiche Parish Church gratefully acknowledges the donation of Alter flowers for Christmas eve and Christmas day by the Arakelian family.

Please remember our in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations.

Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, Cranley Gardens, and Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange your donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to donate £to the St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....